ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

30.05.2024թ. N 32-Լ

Ե Ր Ե Վ Ա Ն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 28-ի N 860-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կանոնադրության 21-րդ կետի 15-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել ուսումնական հաստատությունում սովորելու կամ վերապատրաստվելու համար պետության կատարած ծախսերի փոխհատուցման կարգը և չափերը՝ համաձայն հավելվածի:
2. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալներին, կենտրոնական մարմինների, Երևանի քաղաքային և մարզային վարչությունների պետերին և ենթակա անձնակազմին:

ՀՀ ազգային անվտանգության
ծառայության տնօրեն **Ա. ԱԲԱՋՅԱՆ**

Հավելված
ՀՀ ազգային անվտանգության
ծառայության տնօրենի 2024 թվականի
մայիսի «30»-ի N 32-Լ հրամանի

ԿԱՐԳ ԵՎ ՉԱՓԵՐ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն հավելվածով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) ուսումնական հաստատություն, ինչպես նաև ԱԱԾ կողմից Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության համապատասխան ուսումնական հաստատություններ սովորելու կամ վերապատրաստվելու գործուղված և հետագայում ազգային անվտանգության մարմիններում ծառայությունից արձակված ծառայողի ուսման կամ վերապատրաստման համար պետության կատարած ծախսերի փոխհատուցման կարգը և չափերը:

2. Ծառայողը պետության կատարած ծախսերը փոխհատուցում է «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում՝ ուսման կամ վերապատրաստման համար պետության կատարած փաստացի ծախսերի գումարի չափով:

3. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում ծառայողը չի հատուցում ուսման կամ վերապատրաստման համար պետության կատարած ծախսերը:

4. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում ԱԱԾ ֆինանսական վարչության կողմից յուրաքանչյուր ծառայողի համար առանձին իրականացվում է հաշվարկ, որի հիման վրա կազմվում է տեղեկանք ծառայողի ուսման կամ վերապատրաստման համար պետության կատարած ծախսերի վերաբերյալ:

5. Սույն հավելվածի 4-րդ կետում նշված տեղեկանքը ներկայացվում է ԱԱԾ կադրերի վարչություն ծառայողի հետ ուսման կամ վերապատրաստման համար պետության կատարած ծախսերի փոխհատուցման մասին պարտավորագիր (Ձև N 1) կնքելու նպատակով:

6. Հատուցման ենթակա գումարը ծառայողի կողմից կանխիկ կամ անկանխիկ եղանակով վճարվում է պետական բյուջե՝ սույն հավելվածի 4-րդ կետով նախատեսված տեղեկանքում նշված հաշվեհամարին:

7. Օտարերկրյա պետության ուսումնական հաստատությունում սովորող ծառայողի համար պետության կատարած ուսման ծախսերի ընդհանուր փոխհատուցման չափը ձևավորվում է յուրաքանչյուր ամիս ծառայողին Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 712-Ն որոշման N 1 հավելվածի 14.3 կետով սահմանված չափով վճարված գումարի, ուսման ծախսի և ուսման վայր մեկնելու ու վերադառնալու ճանապարհածախսի հանրագումարից: Օտարերկրյա պետության ուսումնական հաստատությունում վերապատրաստում անցնող ծառայողի վերապատրաստման համար պետության կատարած ծախսերի ընդհանուր փոխհատուցման չափը ձևավորվում է յուրաքանչյուր ամիս ծառայողին Հայաստանի Հանրապետության

կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 712-Ն որոշման N 1 հավելվածի 14.2 կետով սահմանված չափով վճարված գումարի և վերապատրաստման վայր մեկնելու ու վերադառնալու ճանապարհածախսի հանրագումարից:

8. ԱԱԾ ուսումնական հաստատությունում և ԱԱԾ կողմից Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում սովորելու կամ վերապատրաստվելու ընթացքում ծառայողական բնակարանով ապահովվելու փոխարեն դրամական հատուցում ստանալու դեպքում, ծառայողի ուսման կամ վերապատարաստման համար պետության կատարած ծախսերի ընդհանուր փոխհատուցման չափը ներառում է ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու համար ծառայողին տրված դրամական հատուցման գումարը և գործուղման ծախսը:

9. Ուսումնական հաստատությունում սովորելու կամ վերապատրաստվելու համար պետության կատարած ծախսերի փոխհատուցման պարտականությունից ծառայողի հրաժարվելու դեպքում ուսման կամ վերապատրաստման ծախսերի բռնագանձումն իրականացվում է դատական կարգով:

Ձև N 1

Պ Ա Ր Տ Ա Վ Ո Ր Ա Գ Ի Ր
ՈՒՍՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ես՝ _____

(անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(անձը հաստատող փաստաթղթի տվյալները)

հաշվառված _____ հասցեում,

(հաշվառման հասցեն)

պարտավորվում եմ ամբողջությամբ փոխհատուցել «Ազգային անվտանգության մարմիններում ծառայություն մասին» օրենքի 45-րդ հոդվածի համաձայն և ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի_____թ. N _____ հրամանով սահմանված կարգով հաշվարկված

_____

(գումարի չափը թվերով և բառերով)

դրամ ուսումնական ծախսերը հետևյալ համամասնությամբ՝

_____հաշվեհամարին:

(հաշվեհամարը)

Ես՝ _____

(անունը, հայրանունը, ազգանունը)

պարտավորվում եմ յուրաքանչյուր անգամ համապատասխան վճարումը կատարելուց հետո վճարման անդորրագիրը ներկայացնել ՀՀ ազգային անվտանգության ծառայության ֆինանսական վարչություն:

Սույն պարտավորությունը պատշաճ չկատարելու դեպքում

_____

(անունը, հայրանունը, ազգանունը)

նախազգուշացվում է գումարը դատական կարգով բռնագանձելու և դատարանում որպես պարտապան հանդես գալու մասին:

_____

(ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

«_____»_____202 թ.

Քաղաքացի _____

(անունը, հայրանունը, ազգանունը)

ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ԱԱԾ կադրերի վարչության պետ,

_____

(կոչումը, անունը, հայրանունը, ազգանունը)

«_____»_____202 թ.